




Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՊԱՆՈՒԹԻՒՆ

Աշխատանքը բանտերում. — Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Հայր Ալեքսանդր վարդապետ Արարա-
տեան. Նամակ վերին-Ազգութիւն. Նամակ խմբա-
գրին. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Բուլանդիկ և իր կուսակցութեան ընկերը. — Տե-
ղեկութիւններ Թիֆլիսից և Թիւրքաց Հայաս-
տանից. Արտաքին լուրեր. — ՀԵՆՈՒՄՆԻՆԵՐ. — ԲՈՐ-
ՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՆՏԵՐՈՒՄ

Յայտնի է, որ գերմանացիները և Անգ-
լիայում, մասամբ Ֆրանսիայում և Իտա-
լիայում, բայց զլիսաւորապէս Հիւսիսային
Ամերիկայի Միացեալ-Նահանգներում վա-
րդ-ց է արդէն զբոլթիւն ունեն այնպիսի
բանտեր, որտեղ յանցաւորներին ընտելաց-
նում են այլ և այլ աշխատանքներին, այլ
և այլ արհեստներին, որպէս զի նրանք
բանտերից դուրս գալուց յետոյ պիտանի
լինէին հասարակութեանը և իրանց ան-
ձին, կարողանային ազնիւ աշխատանքով
փող վաստակել: Այդ տեսակի Հիմնարկու-
թիւնները երկու տեսակի ոգուտ ունեն. նախ
յանցաւորը, մի յայտնի արհեստ սովորելուց
յետոյ, կարողանում է, երբ արդէն դուրս
է եկել բանտից, իր սեփական ունեւեր վրա
կանգնել, անկասկա մարդ լինել, ազնիւ վա-
ստակով իր անձը և իր ընտանիքը պահել,
ուրեմն արհեստների սովորեցնելը բանտե-
րում ազնւացնում, բարոյականացնում է
յանցաւորներին, բարոյապէս ընկած մարդ-
կանց: Երկրորդ օգուտը, որ ներկայացնում
են այդ տեսակի բանտերը՝ այն նիւթական
նշանաւոր շահն է, որ ստանում է բանտը
յանցաւորների ձեռքով պատրաստվող այլ
և այլ արդիւնաբերութիւնների ծախվելուց:
Ամերիկայի այդ ձևի բանտերից շատերի
մէջ իրադրութիւն է և յանցաւորներին հա-
մար ընդհանուր խնայողական արկղը, որը
հետեւեալ կերպով է գոյանում: Եանցաւոր-
ների պատրաստած արդիւնքները ծախվե-
լուց ստացվող գումարի մի մասը կատակա-
ցում է բանտի գոյութեան պահպանու-
թեան անհրաժեշտ ծախսերին, իսկ նոյն
գումարների մի որոշ տոկոսը տարուց տարի
մտնում է յանցաւորների համար բանտի
մէջ հաստատված խնայողական արկղը:

Նմանաբանտ է, ուրեմն, որ յանցաւորնե-
րին օգտաւէտ, գործնական, վաստակ տուող
արհեստներ սովորեցնելը մի կողմից տալիս
է բանտերին նիւթական շահ, իսկ միւս
կողմից բարոյականացնում է յանցաւորնե-
րին, դարձնելով բարոյապէս ընկած այդ
մարդկանցից հասարակութեան պիտանի
անդամներ:

Բայց երբ տասնեակ տարիներ անցան և
թէ Եւրոպայում, թէ Ամերիկայում այդ
տեսակի բանտային հաստատութիւնները, այ-
սինքն բանտերը, որոնց մէջ յանցաւորներին
արհեստներ են սովորեցնում, սկսեցին հետ-
զհետ թուլ շատանալ և իրանց գործու-
նէութիւնը ընդարձակել. — այն ժամանակ
այն արհեստաւորներն ու բանտերը, ու-
րոնք կամ տնային, մասը արդիւնաբերու-
թեամբ են զբաղվում, կամ բանում են գոր-
ծարաններում, ձայն բարձրացրին բանտա-
յին աշխատանքների դէմ, սկսեցին բողոքել
այդ օգտաւէտ հաստատութիւնների դէմ,
առարկելով կառավարութիւններին ներկա-
յացրած իրանց խնդրագիրներին մէջ, որ
բանտային աշխատանքները դրված լինե-
լով աւելի աշուղ պայմաններին մէջ, քան
թէ ազատ արհեստաւորներն ու բանտե-
րներ, և նրանց աշխատանքը յայտնի չա-
փով հովանաւորված լինելով կառավարու-
թիւնից, — նրանք մրցութիւն են անում
արհեստաւորներին ու բանտերներին:

Կառավարութիւնները հետաքրքրվեցան
այդ հարցով և ի միջի այլոց գերմանական

կառավարութիւնը յանձնարարեց վիճակա-
գրական բիւրօյին պարզել հարցը ճիշդ
թւանջաններով, որպէս զի կարելի լինէր
համոզվել՝ արդե՞ք բանտային աշխատանք-
ները ճշմարիտ վնասում են ազատ աշխա-
տաւորներին և ճշմարիտ մրցում են ազատ
արդիւնաբերութեան հետ: Գերմանական
կառավարութեան այդ յանձնարարութեան
հիման վրա լոյս տեսան այդ նշանաւոր
հարցի մասին բազմաթիւ գրումները, սա-
կայն այդ տեսակի գրումների շարքում
ամենից աչքի ընկնողը՝ Նալի պրօֆէսոր,
ուսումնական Բօլանդ Գալկներին աշխատու-
թիւնն է, որը այս օրերս լոյս տեսաւ և
որը կրում է „Die Arbeit in den Gefängnis-
sen“ (Iena 1888) վերնագիրը:

Բօլանդ Գալկներին է պատկանում հար-
ցը վճռելու կամ պարզելու նախաձեռնու-
թիւնը: Թէ և հաստատ իրողութիւններից
և ճիշդ թւանջաններից յայտնվում է, որ
այն վնասը, որը կրում են բանտային աշ-
խատանքներից ազատ արհեստաւորներն ու
գործարանների բանտերները աննշան է,
համեմատելով այն անասելի թէ նիւթա-
կան և թէ բարոյական օգուտի հետ, որը
ներկայացնում է ժամանակակից քաղաքա-
կիրթ հասարակութեան համար՝ յանցա-
ւորներին արհեստներ սովորեցնելը, սակայն
խնդրին ձեռնհաս մարդիկ գերմանացիում
և Ամերիկայում հետզհետէ այն եղբայրա-
ցութեան են հասել, որ մրցութիւն չանե-
լու համար արհեստաւորների և գործա-
րանական բանտերների մեծամասնութեանը,
— աւելի լաւ կը լինէր սովորեցնել բան-
տարկված յանցաւորներին ոչ թէ արհեստ-
ներ, այլ ընտելացնել նրանց իրանց բան-
տարկութեան ժամանակի զիւղական, կամ
աւելի լաւ է ասել՝ զիւղատնտեսական աշ-
խատանքներին, որպէս զի յայտնի ժամա-
նակամիջոցից յետոյ բանտերից դուրս եկող-
ները դառնային ոչ թէ արհեստաւորներ
ու քաղաքային բանտեր, այլ զիւղական,
շինական, գաղտային աշխատողներ:

Յայտնի է, որ քաղաքակիրթ երկրնե-
րում զաղթականութեան մշտական հոսանք
կայ գիւղից դէպի քաղաքը: Այդպիսով քա-
ղաքները, մեծ առևտրական կենտրոններ,
լցվում են այն ոյժերով, որոնք թանգ ու
անհրաժեշտ են գիւղի համար: Այդպիսով
քաղաքներում հաւաքվում, դիպվում են
գիւղիկ հարկաւոր աշխատող ձեռքերը, իսկ
գիւղից հեռագնաց աւելի և աւելի է զրկ-
վում իր թաղի ոյժերից, իր համար ան-
հրաժեշտ աշխատող ձեռքերից: Բանտերում
յանցաւորներին սովորեցնելով զիւղական
աշխատանքները, և դարձնելով նրանց հա-
սարակութեան պիտանի անդամներ, այդ-
պիսով առաջ կանգնի գիւղից դէպի քա-
ղաք եղած զաղթականութեան մշտական
հոսանքին, ստեղծելով մի հակահո-
սանք, այսինքն նորից ցրվելով գիւղերում
այն ոյժերի մի մասը, որոնք պակասել են
գիւղիկ և ապարդիւն կերպով դիպվել են
քաղաքներում:

Որքան պիտի աջողվի այդ ենթադրու-
թիւնը, — դա այլ խնդիր է: Միայն տեսա-
կանապէս դատելով՝ այդ դիտարկութեան
իրադրութեամբ անշուշտ ահագին օգուտներ
կը մատուցանէ մարդկութեանը, նորից ցր-
վելով գիւղերում այն թաղի ոյժերը, որոնք
ապարդիւն կերպով դիպվել խափել են քա-
ղաքներում և որոնք մեծ գործարանական
կենտրոններում այլ և այլ կորստաբեր աղ-
ղեցութիւններին են ենթարկվում, մի և
նոյն ժամանակ յափշտակելով գիւղական
ազգաբնակչութիւնից իրան համար հարկա-
ւոր ոյժերը:

Եւ բանտից դուրս եկած, բարոյականաց-
րած, մարդկային հասարակութեան համար
նորից պիտանի դարձրած թաղի ոյժերը,
ընտելացած լինելով գիւղական աշխա-
տանքներին, այլ ևս մրցութիւն չեն անի
քաղաքային արհեստաւորներին և բանտե-
րներին:

ներին, այլ այդ ոյժերը գործ կը դրվեն
քաղաքակիրթութեան համար անհրաժեշտ
մի ուրիշ ասպարիզում՝ կատարելով թէ
սովորական գաղտային աշխատանքներ, թէ
ճահիճներ չորացնելու, ճանապարհներ անց-
կացնելու, կամուրջներ ու ջրանցքներ կա-
ռուցանելու և այլ աշխատանքները, — մի
խօսքով կը ներկայանան որպէս մարդկային
քաղաքակիրթութեան համար աշխատող,
որպէս ստեղծագործող ոյժեր:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Անցեալ մայիսի 23-ին, երկարատև հիւանդու-
թիւնից յետոյ, կիւնց իր մահկանացուն հայր
Ալեքսանդր վարդապետ Արարատեան, որը նա-
խադասանդամ էր Ախալցխայի հայ-կաթօլիկների
հոգևոր կառավարութեան և վիճակային կառա-
վարի Ալեքսանդրօպօլի դաւառի հայ-կաթօլիկ
եկեղեցիների և ժողովրդի:

Հարկաւոր եմ համարում մի համառօտ կենսա-
գրական տեղեկութիւն տալ հետաքրքիր ընթերցող-
դին երջանակալիտաւ հանդուցեալի կենսի և
գործունէութեան մասին ընդհանրապէս, թողնե-
լով ընդանադատութեան ենթարկելու նորա հասա-
րակական երկրաթմանական գործունէութիւնը,
օգուտաւ և վնասաւոր ընթացքը հասարակական
գործունէութեան մէջ, որը մօտիկ ապագայում,
ամենայն իրաւամբ բռնելու է հայ-կաթօլիկ պատ-
մութեան էջերը:

Հայր Ալեքսանդր վարդապետ Արարատեան
ծնվել է 1820 թվին Ալեքսանդրօպօլից ոչ հեռու
Փորթ-Արարքից գիւղում, աղքատ և տղէտ ծը-
նողներից, զեռ. ևս պատանի հասակում նա դառն
աղքատութեան մէջ դիմում է նախ Երզրում և
ապա Ախալցխայում աշակերտում է այն ժամա-
նակներում հռչակաւոր Պօղոս վարդապետ Դա-
նիւսեանի մօտ, որը պրոպագանդայի աշակերտ է
եղել, Թիֆլիսի հայ-կաթօլիկների հոգաբարձու-
կայի հայ-կաթօլիկ հասարակութեան հոգևոր կա-
ռավարի: Ախալցխայի հայ-կաթօլիկների հոգևոր
կառավարութեան մէջ:

Ներտասարդ Վաղար (այդպէս է հանդուցեալի
մանկութեան անունը) շատ ջանասեր, ընթերցա-
տէր և ընդունակ աշակերտ է լինում և շուտով
կարողանում է իր վարդապետի ուսուցչութիւնը
գրաւել իր համարձակ, աղքատ և հեռաւոր ընա-
ւորութեամբ, որոնց հետ ունէր և մտաւոր բարձր
ընդունակութիւն, ուսման ծաւաւ և որը առաւել
հազուադէպ էր, ընտիր վարչական յատկութիւն
ու ինքնուրոյն ընտարութիւն: Կարճ ժամանակի
մէջ, նա կարողանում է ինքնակիրթութեամբ և հայ-
կաթոնութեան մէջ, որ իր վարժապետը ամենայն
իրաւամբ նրան համարում է արժանի իր յաջոր-
դութեանը, և 1845 թ. երիտասարդ դպիւրը ար-
ժանանում է հոգևոր կույմանը և ձեռնադրվելով
վարդապետական կույման մէջ Պետերբուրգի Լա-
տին եպիսկոպոսից, վերադառնում է հայրենիքը,
որտեղ այդ ժամանակ շատ ախուր էր հայ-կաթօ-
լիկ ժողովրդի վիճակը:

Արժանաւորապէս գնահատելու համար հայր
Ալեքսանդր վարդապետ Արարատեանի հասարա-
կական գործունէութեան շրջանը, պէտք է յիշենք,
որ այն ժամանակ, երբ նա մտնում է գործու-
նէութեան ասպարէզը, այնքան աննպաստ պայ-
մաներով է շրջապատված լինում, որոնց ընդդի-
մանաւ և յաղթելու համար հարկաւոր էր սրտի
անկաղթելի ամբողջութիւն, եռանդ և համբերու-
թիւն, և այդ առաքելի յատկութիւններ ու-
նեցող անձը միայն կարողացել է հանգստացնել
հասարակական յուզված ներքին վիճակը և ապա-
հովել նորա ապագայ բարոյական կենսի:

Երբ 1830 թվին թիւրքաց Հայաստանից գաղ-
թեց հայ-կաթօլիկ ժողովուրդը և հաստատվեց
Ալեքսանդրօպօլի, Ախալցխայի, Ախալքալաքի և
Լոռու վիճակներում, նոքա թէ և ունէին իրանց քա-
հանանքը, բայց այդ քահանանքը շատ թույլ էին
և անընդունակ կառավարելու իրանց ժողովուր-
դը քանի որ նրանք դեռ ևս իրանց, հայրենիքում
չունէին եկեղեցական աղատ վարչութիւն, որոշ
կանոնական ուղղութիւն, և միայն 1831 թվին
հայ-կաթօլիկ համայնքը կարողացաւ աղատ հա-
մայնք կազմել և եկեղեցական վարչական աղա-
տութիւն ստանալ, որի համար աշխատում էին
Յակոբ վարդապետ Մանուէլեան, հայր Անտոն
վարդապետ Նուրիճեան և հայր Մկրտիչ վարդա-
պետ Ազգերեան, և որոնց պաշտելի նպատակն
էր անխախտ պահել հայոց ժամակաւորութիւնը, ե-
կեղեցական ծէսերը և արարողութիւնները, համա-
ձայն արեւելեան եկեղեցու իրաւունքների և արտօ-
նութիւնների: Կ. Պօլսի մի քանի պատրիարքների
վերջին հալածանքը, Գօլէթի և Լատին եկեղեցա-
կանների, Վենեցիայի միաբանութեան և քահա-
նաների միմեանց դէմ մղված անկրկնաւորի և
ստակալի կրօնական բանակութիւնը այն աստի-
ճան խառնակել, չիղթել և անընակաւ վիճակի մէջ
էին դրել հայ-կաթօլիկ հասարակութեան ներքին,
բարոյական վիճակը, որ զաղթականութեան մի-
ջոցին, երբ նորիններին անձանթ էին գլուտու-
թեան օրէնքները, պահանջվում էր այնպիսի հօդ
և աշխատաւոր անձի գործունէութիւնը, որը կա-
րողանար նորից խաղաղացնել և օրինական ճանա-
պարհի վրա պահել կրօնական հասարակութեան
ներքին վիճակը և ամրապնդել հայ-կաթօլիկների
ապագան:

Նորահաստատ հայ-կաթօլիկ ժողովուրդը մինչև
1844 թվին չունէր իր հոգևոր վարչութիւնը և
միայն այդ թվին հայր Պօղոս վարդապետ Դա-
նիւսեան նշանակվեց հոգևոր կառավարիչ բո-
լոր հայ-կաթօլիկների, իսկ 1847 թվին, յուլիսի
22-ի կանոնադրութեամբ, ևսուցա կառավարու-
թիւնը հայ-կաթօլիկ կրօնական համայնքը ճանա-
չեց աղատ կրօնական եկեղեցի, որոշ կանոնական
իրաւամբ ստորադրված ժամանակադրապէս Տի-
րասպօլի Լատին իշխանութեանը: (Сводъ зако-
новъ Россійской Имперіи, томъ 11, ст. 75, 94,
104): Բայց Լատին իշխանութիւնը հեշտութեամբ
չէր կամենում ձեռնպահ մնալ հայ-կաթօլիկ հա-
սարակութեան ներքին գործերից, նա հայր Պօղոս
վարդապետի դէմ այնպիսի հալածանք, զրկանք և
եկեղեցական իրաւանց բռնադատութիւնը ճանա-
չացրեց, որ անկարելի էր հայ-կաթօլիկներին եր-
կար դիմանալ, եթէ անաւարտութիւնը 1844 թ.
այդ կապ ունէին Լատին կարգաւորներին իս-
պառ չը հեռացնէր Ռուսաստանից, քանի որ նը-
րանք սովոր էին հարստահարել կրօնաւէր ժո-
ղովրդի սիրտը և հոգին և բռնաւոր նորա սրբա-
զան իրաւունքների վրա: Ալեքսանդրօպօլում այդ
կապուցին պատենները հիմնարկել էին հայ-կաթօ-
լիկներին եկեղեցին, երբ նոցա պարտեց յետոյ
վրա հասաւ երիտասարդ Ալեքսանդր վարդապետ
Արարատեան, որը ժողովարարութեամբ կարողա-
ցաւ աւարտել և օժիլ հայ-կաթօլիկներին եկեղե-
ցին, և այդ օրից Արարատեանի առաջ բացվում
է գործունէութեան ընդարձակ ասպարէզ, և նա
ձեռնարկում է կազմակերպել և հաստատուն ուղ-
ղութեան հասցնել հայ-կաթօլիկ հասարակութեան
ներքին բարոյական վիճակը:

Քանի որ նոր էր հաստատված հայ-կաթօլիկ
ժողովուրդը և չունէր եկեղեցիներ ու քահանա-
ներ, հայր Ալեքսանդր վարդապետ Արարատեան
դառն գրկանքների դիմանալով, կարողանում է
բանալ Վճարկովկասեան հայ-կաթօլիկներին հոգե-
ւոր դպրոցը, որտեղ ուսանում էին բոլոր կող-
մերից հաւաքած աշակերտները, և որոնք հետ-
զհետէ արժանանում էին քահանայական պաշտօ-
նի: Եւ այս բոլորիս հայ-կաթօլիկ քահանաներից
շատերը նորա աշակերտներն են, հայ-կաթօլիկ ե-
կեղեցիներից շատերը նորա նախաձեռնութեամբ

կէսից տարածվեց մարդկանց մէջ տի. ֆ. ասված հիւանդութիւնը Այս օրերս վախճանվեց մի հայ օրերը, որը շատ հիմնական կերպով էր. հանդու- ցեալին գիւղի Սիւնի մարդ յարգում էր Յունիսի 20-ին սկսվեցան բաւական չոր եղանակները. տարածվի- նը համուս էր մինչև 41 աստիճան և այս չորե- րի հետ յայտնվեցան կենդանիները, մահաւանդ բանող կենդանիները հիւանդութիւնները, այնպէս որ օրական մինչև 10 հատ անասուն է տա- կուս:

Յուլիսի 12-ին, ինչպէս հաղորդում են տեղա- կան ուսու լրագրիւնները, պարտաւոր, Նիստովտովը պրոկուրորի բողոքի համեմատ, քննվում էր նորից Յաթիւս գիւղի Սիւնի քահանայ Տէր-Սարգսեանի, 77 տարեկան Աննա Թաթումեանի և միւսաների գործը, որոնց արգելադրել էր Շուշիում Նիստ- վեանովի դատարանը: Գործի դիւլցուցումը յետոյ պարտի պրոկուրորի օգնական պ. Կոլշտէտ էր ճառում յայտնեց, որ նա գործի ներկայ դրութիւ- նից չէ կարող այն եղանակով թեման հասնել, որ մեղադրեալները մեղաւոր լինին իրանց վրա բարձրած մեղադրանքները մէջ, այդ պատճառով խնդրում է դատարանի պրոկուրորի բողոքը թողնել առանց հետանքի և նախանշական դատարանի վիճ- ուր հաստատել: Նորից խնդրեց և մեղադրեալների պաշտպան պ. Խաչատրեան: Գատաւտանական պաշտը երկար խորհրդակցութիւնից յետոյ վճիռ դուրս բերեց, որով նախնական դատարանի վճիռը ոչնչացվում է և մեղադրեալները մեղա- ւոր են ճանաչվում: Պաշտը վճեց քահանային և երեք միւս մեղադրեալներին աքսորել Սիբիրի հեռավոր կողմերը, իսկ պատաւ կնոջը երեք ամ- սով բանտարկել:

Մեկ հաղորդում են, որ Թիֆլիսի խորհուր- ւոյ վախճանվեց մէջ երեքսեղ է սե ծաղիկ ասված հիւանդութիւնը, որից կարճ ժամանակում մի տան մէջ երկու հոգի վարակվելով մեռել են: Չը նայելով որ բժիշկը մեռածները չորերը և ան- կողմները այրել և դանաղան պղծաշնոյ մի- ջոցներ է գործ դրել, այնու ամենայնիւ մի և նոյն տան մէջ մի և նոյն հիւանդութիւնից նորե- րուն վարակվում է և երրորդը: Նիք սորա վրա շատով ուշադրութիւն չը դարձնել, նախապա- շարմանքի չնորոտ արտը կարող է մեծ չափեր առնել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՒԱՆՇԵԻ ԵՒ ԻՐ ԿՈՒՍԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿՆԵԼ

Փարիզում նորերումս քաղաքական կուսակցու- թիւնների յարաբերութիւնները աւելի խաղաղ ընտարութիւն են ստացել. վերջին ամիսների անընդատ ազմուկները, որոնք բարձրացան զլիսաւորապէս Բուլանթէի և նրա կողմնակից միապետականների չնորոտը—համարեա այլ ևս գոյութիւն չունեն: Քաղաքական մի քանի թէ ներքին և թէ արտաքին հանգամանքները բաւա- կան փոփոխութեան հնարավորեցին, և միապե- տականները ու բուլանթեանների կուսակցութիւնը կորցրեց իր գործունէութեան զլիսաւոր հիւժը, անկարող լինելով այլ ևս համոզելու ժողովրդին, որ հանրապետութեան ընթացքը վտանգ է սպառ- նում հայրենիքի անկախութեան:

Երբեք քաղաքական կուսակցութեան փո- փոխութիւնները սիրահար Ֆրանսիան արդէն բաւական զորեց քաղաքական բազմապիւղութեանը զբաղվող փառամոլների հանած արգելա- ներից, և այժմ, ինչպէս ցոյց են տալիս վերջին տեղեկութիւնները, թէ միապետականներն են սառել դէպի իրանց մօտիկ ձգտումները և թէ այդ միապետականների փայտեղած հերոսը՝ Բու- լանթէ մնացել է մենակ, և նրան չեն հետևում նոյն իսկ իր մօտիկ համակրողները:

«Անհրաժեշտ է պատգամաւորները ժողովը ար- ձակել, անհրաժեշտ է հանել հայրենիքը իր վտան- դաւոր դրութիւնից» ազատելով նրան այժմեան կառավարութեան ձեռքից, և այլ այլաբան խօսքերը, որ մի ժամանակ իր ճառերի և շրջա- բերականների մէջ անդադար կրկնում էր Բու- լանթէ, և որոնք նոյն իսկ մօտիկ անցեալում բա- ական ճշտիկեղ ազդեցութիւն էին թողնում Փարիզի փողոցներում, այժմ կորցրել են իրանց զեղեկական ոյժը, և ամեն տեղ սառնութեան են հանդիպում:

Բուլանթէ փառաւոր կառքերով անցնում է

Փարիզի փողոցներով յոյս ունենալով առաջվա- նման ցոյցերի արժանանալ.—բայց ամբողջ նա- յում է, ու նայելով անցնում... Բուլանթէ խորտակեց և անկասկած սրտի տրոփիւնով մտնում է պատգամաւորների ժողովը, ուր մի ժամանակ նրա դալը բաւական ազմուկ- ներ էր առաջ բերում, և ժողովը նրան ընդունում է սովորական սառնութեամբ և անտարբերու- թեամբ: Իսկ այժմ, այդ քաղաքական փառամո- լին արված է վերջին հարուածը, և նա, որ իր ազմուկը գործունէութեան սկիզբում համեմատա- րար աւելի համակրելի դրեց էր ընտել, քան թէ վերջում, երբ նա իր երկրից մի կողմ ցցեց զի- մակը, այժմ յուսահատ դրութեան մէջ, անկող- նում, իր կրած վէրքն է դարձնում: Յայտնի է արդէն Բուլանթէի մենամարտութիւնը Ֆրանսիա- կան այժմեան միջնադար-նախագահ Ֆլոպէի հետ: Պատգամաւորների ժողովը վերջին նիստերից մէ- կում, Ֆլոպէ և Բուլանթէ միմեանց հետ վիճաբա- նութիւն ունեցան, վիճաբանութիւնը շատ սուր կերպարանք ստացաւ, և մինչև իսկ երկու խօ- սողները միմեանց իրաւորական խօսքեր ասա- ցին, և հետեանքը այն եղաւ, որ Ֆրանսիական սովորութեամբ նրանք դուրս եկան միմեամարտե- լու: Մենամարտութեան ժամանակ Ֆլոպէ ծանր կերպով վիրաւորեց Բուլանթէին, այնպէս որ կարծում էին թէ Բուլանթէ կը մեռնէ: Սակայն վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս որ նրա մարմինը այլ ևս վտանգի մէջ չէ, նա կառույճա- նայ, համապիւղով անկասկած, որ անախդ անցաւ իր քաղաքական բազմապիւղութիւնը, որ այժմ նրա ժողովրդականութիւնը օդն է ցնդում, որ հանրապետութեան ոյժը աւելի մեծ է, քան թէ կարելի էր կարծել, և որ իրան միտած է այժմ միայն կրկնել՝ «աւաղ փառացի անցաւոր»:

ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ ԹԻՒՐԻՒՆՅՈՒՆ ԵՒ ԹԻՒՐԻՒՄՆ ԶԱՅԱՍՏԱՆԻՑ

Հայաստանի և Փոքր-Ասիայի մի քանի կողմն- րում վերջին տարիները և մանաւանդ այս տարի երեքսեղ են դանաղան բոյսերի, զլիսաւորապէս խաղաղի որբի վրա, հիւանդութիւնների: Թիւրք- կառավարութիւնը մի քանի միջոցներ է ձեռք ա- ուել այդ հիւանդութիւնների առաջն առնելու համար. այդ միջոցների մասին զաղափար տալու համար, առաջ ենք բերում «Impartial» լրագրի տուած մի քանի տեղեկութիւնները Զմիւռնիայի վերաբերութեամբ: Որբութեան մասին մեզ հա- տած նորագոյն լուրերն այժմ տիրաւորւում են: Այն- քը կը ծաւալի օր ատուր և աւելի ճճիէն վարա- կեալ այդիւնեւ տարածութիւնը կը հասնի այժմ երկու հազար հինգ հարիւր արտաւարի: Կառա- վարութիւնը մերժեց վաւերացումը այն առա- ջարդը զոր ըրած էր որբութեան յանձնաժողովը, մէն մի կենդանար խաղաղի վրայ մէկ զուռի տուրը հաստատելու մտքը, որպէս զի որբութեան ընաշնջման համար ձեռք առնուած միջոցներու ծախքերն հոգացուին: Ի փոխարէն, կայս. կառա- վարութիւնն հրամայած է այդ ծախքերն հոգալ Նրկապոլիսի և Թաղապետական Մատուկներու հասոյթներով:

Ինչպէս արդէն ծանուցիւք երկրագործական տնօրէն Նուրի պէյ և նախանշիկ երկրագործական քննիչ Ուլեկան էֆենդի չորեքշաբթի օրը Գօղու- ճա ուղեորեցան աչքէ անցնելու համար այն այ- դիւններն որը այդ գիւղին բարձրաց վրայ կը զըս- նուրի և դերմանական այգեգործական ընկերու- թեան կը պատկանին: Յետ մանրախոյզ զննու- թեան մը որ տեղից վեց ժամ, յիշեալ տեղքը՝ ո- րոց կընկերանային ընկերութեան տնօրէն Պ. Միւլլէր և շրջակայ այգեգործաց մէկ պատուի- բակն, որբութեան հետ չը նշմարեցին ընաւ: Հե- տեաքար դերմանական ընկերութեան այգիները մինչև ցարդ դերմ մնացած են աւելի ճճիէն: Նուրի պէյ հեռադրաւ իրմիւր հրաւիրած է Նշան էֆ. Գալֆայան, երկրագործ Մոնթէլէի ուսում- նարանէն: Նշան էֆ. այսօր կը մեկնի իրմիւր մասնակցելու որբութեան յանձնարարին աշխա- տութեանց:

Պոլսի ազգային խառն ժողովը իր վերջին նիս- տերից մէկում ուշադրութեան է առել և Ամբրոսիոս վ. Բուլանթեանի Բուստայաստանում հանդանա- կած փողերի գործը: Այդ մասին Պոլսի լրագրի- ւերում կարդում ենք հետեւեալ անորոշ տեղեկու- թիւնը: «Ուրբեանս Ամբրոսիոս վարդապետի ընտ- րութիւնն ի պաշտօն առաջնորդութեան Բա- բերդի ըստ որոշման խառն ժողովը յատուցա-

ղոյն հաստատուած էր Բաց աստի երկրագործա- կան վարժարանի մը հաստատութեան ի նպատո Ռուսաստանի մէջ իւր կատարած հանդանակու- թեան հաշուց խնդրին յատենի խառն ժողովը զննուելով Տնտեսական խորհրդի կողմէ մատու- ցեալ տեղեկագիրն և Ամբրոսիոս վարդապետի բազմապիւղութիւնները լուսնէ յետոյ, կարեւոր տնօրէնուած և հետեւաւոր փակուած էր նոյն հաշուական խնդրին: Ամբրոսիոս վարդապետ ներ- կայանալով ժողովին, սոյն առթիւ վերջնապէս հրաժարեցաւ իւր դրամական պահանջէն ի Ս. Նրկապոլիսի երկրեցոյն Բերայի»:

Մեկը էլի գծաւորանում ենք հաւատալ, որ այդ բողոքը մի բան դուրս դաշ...

Առհասարակ Ա. Պոլսի հայոց լրագրութեան մէջ շատ քիչ է պատահում կարգաւ դաւաճաներից դրած այնպիսի թղթակցութիւններ, որոնք նկա- րագրէին տեղական արդիւնաբերութիւնը, տեղա- ցիկների պարագայումները, և այդ պարագայումն- րների տուած բերքերի աչոյ կամ անախդ լինելը: Պոլսի լրագրիւնները նոյն իսկ դաւաճական թղթակ- ցութիւնները զբաղւում են ազգային, այն է թա- ղական խորհուրդների և քահանաների խնդրեա- ներով: Այդ պատճառով «Արեւել» լրագրի մէջ մենք ուրախութեամբ կարդացինք հետեւեալը, որ դրած է Պանարամայից, և որը թէն մի առանձին հետաքրքրութիւն չունի, բայց որը առաջ ենք բերում իբրեւ Պոլսի լրագրութեան համար մի ան- սովոր բան: «Տարուէ տարի դժբաղդութիւն հեռ- դիտեմ մեր ժողովրդեան վրայ կը ճնշէ. անցեալ տարուան ներքին դաւաճաց մէջ տիրած երաշ- տութիւնը կարծես բաւական չէր, այս տարուան սաստիկ ձմեռն ամբողջապէս երաշտին դործն, և մինչև իսկ ակնկալուող իր սպասիկն այս տարուան նոր հնձոց, ահա չերամի բերքն յոյժ դժբաղդ- վածան մ'ունեցաւ. Այս տարուան չերամի բեր- քն անցեալ տարուան համեմատ 40% պակաս է. սոցա վրայ աւելցնելու է նաև չերամի գնոց անկումն 30% բաղդատելով անցեալ տարուան գիներուն. այս ամեն աննպատ պայմանաց հետ միատեղ, այս տարուան չերամի բերքն անցեալ տարուանն շատ աւելի ծախքերու պէտք ունե- ցաւ: Սոյն անխաղաղութեան զլիսաւոր պատճառ- ան պատճառն աւելի և մայիս ամսոց մէջ անժա- մանակ ցորաւորն» որ քիչ շատ վնասեցին նաև հունձեղերուն ևս. այնպէս այս տարուան հունձ- քերին շատ տեղեր անցեալ տարուան հունձքե- րուն վրայ 15—20% պակաս է: Այս օրերս Պա- լքեթէի Միւլլէրի բաշան եկած է հսկելու համար տասանորդաց վաճառման գործողութեան, և չի յուսացել որ անցեալ տարուան գնոց վրայ 30% պակասէն աւելի վաճառուին: Արդէն անցեալ տարի շատ աւելի նպատաւոր պայմա- նաց մէջ տասանորդի ամեն վարձակալն առա- ճած կամ նուազ վէն կրեցին: Հունձքերն առկա- սկան, այլ ամառուան բերքերուն մասին դեռ վերջին խօսքն ըսելու ժամանակն հասած չէ դեռ: Առ այժմ մեր հրապարակին քիչ շատ ողբերու- թիւն տուաւ բորակի ծախքի հանդիման լիստա- թեանց եռանդեամբ յառաջ մղուին և արտահա- նումն է, որով մեր դիւղացի ժողովրդեան մեծ գործի են բացուած ամեն դասուց համար»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Յուլիսի 1-ին, Ֆրանսիական ազգային տնօն- նայինքից օրը Փարիզում մեծ շքեղութեամբ բացվեց Ֆրանսիայի հռչակաւոր ազգայնէր Գա- մբետայի արձանը:

—Շեփչարական կառավարութիւնը, համաձայն Ֆրանսիական դեղան Արաբիի առաջարկու- թեան, արգելեց Փարիզի կոմսին ապրել Վէլլուս:

—«Times» լրագրին հեռագրում են Սֆիւայից, որ իսու Կալոսի և իշխան Բիսմարկ շուտով կը ետեանցնեն միմեանց հետ. այդ առթիւ Սֆիւա- յում ընտելվող աւստրիական ընդհանուր հիւպա- տոս Բուլանթ Բոլքարական հարցի մասին մի դե- կուցում է ներկայացրել կոմս Կալոսին: Այդ դեկուցման մէջ Բուլանթ հաղորդում է, որ Ֆե- ղիմանը իշխանի դրութիւնը շատ ծանրացել է և նա հաղւ. թէ կարողանայ երկար մնալ Բոլքա- րիայում:

—Անդրկական պարլամենտը առաջին քու- արութեան ժամանակ ընդունեց մի օրինադր, որով նշանակվում է մի յանձնաժողով, կամ դա- տաստանական ատուան քննելու Պարսէի և նրա համախոհների վրա բարձրած մեղադրանքները: Պարսէին առաջարկվեցաւ կարծիք յայտնել թէ արեւելք նա ընդունում է այդ առաջարկութիւնը:

Պարսէի պատասխանեց, որ նա որոշ պատասխան- չէ կարող տալ, մինչև որ նա լաւ չը ծանօթանայ օրինադրի հետ և չիմանայ թէ ու կը նշանակվի յանձնաժողովի անդամ:

—Հոսմից հեռագրում են, որ պապը շատ համա- կրութեամբ է վերաբերվում Գոն-Կարլոսի որդի իշխան խախնի սպանեալի թաղաճու աղ- ջկայ՝ Աստուրիա իշխանուհու հետ պսակելու նախադրին: Ենթադրում են որ եթէ այդ պսակը կայանայ, Գոն-Կարլոսը կը հրաժարվի սպանեալի գահի վրա իր ունեցած իրաւունքներից: Սպանիա- կան այժմեան թագաւոր մանուկ Ալֆոնսի հի- ւանդոտ լինելու պատճառով այդ պսակին մեծ նշանակութիւն են տալիս:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԻՍՆՆՈՅ-ՄԵԼՈ, 11 յուլիսի: Այսօր դերմանա- կան կայսրի անուան վիթորիան գնդի և զվար- դեան հեծելազորի գորանաղէս էր: Թագաւոր Կայսրը դերմանական կայսրի հետ միասին բաց կառքով եկան զինուորական դաշտը. ապա Նոցա Մեծութիւնները ձիերի վրա նստեցին: Թագուհի Կայսրուհին ժամանեց Մեծ իշխանուհի Նիկոլայե- տա Ֆեօդօրովայի հետ միասին չորս սե ձիաներ լծված կառքով: Զօրահանդիսին ժամանեցին նոյն- պէս Մեծ իշխանուհի Նիկոլայե տա Մարիլիէնա իր քրոջ հետ և Մեծ իշխանուհի Մարիա Պաւ- լովնա: Բարձրագոյն Անձանց զաւուց յետոյ ըսկա- վեցաւ Վիթորիան գնդի զինավարժութիւնը. դի- նաւարժութիւնից յետոյ գնդը հանդիսաւոր կերպով անցաւ Թագաւոր Կայսրի առաջ, առաջ- նորդված լինելով իր չէֆից՝ դերմանական կայս- րից: Գրանից յետոյ, հեծելազորի գնդերաւոր- տու Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայե լիլի առաջ- նորութեամբ, կատարվեցաւ կրասնուկեան բա- նակի ամբողջ հեծելազորի զինավարժութիւնը: Գետ դառնալու նշանը տալուց յետոյ ամբողջ հե- ծելազորը հանդիսաւոր կերպով անցաւ Կայսր- ների առաջ: Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայե լիլի հետ դերմանական կայսրը երկարատեւ խօսակցու- թիւն ունէր, որից յետոյ Մեծ իշխանը, հաւաքե- լով օֆիցերներին, յայտնեց նրանց, որ դերմանա- կան կայսրը չափազանց դժ մնաց գիւղեցիկ դի- նաւարժութիւնից: Թագաւոր Կայսրը և դերմա- նական կայսրը զօրահանդիսից բաց կառքով դը- նացին Վիթորիան գնդի բանակը, ուր, այցելե- լով զինուորական հիւանդանոցը, դերմանական կայսրը խօսեց ուսուրէն մի քանի հիւանդների հետ: Հիւանդանոցը նայուող յետոյ նախաձայնի էր պատրաստված Մեծ իշխան Վալդիմիր Ալեք- սանդրովիլի մօտ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յուլիսի: Երէկ երեկոյան Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին Վի- ճէմ կայսրի և արքիւց շէնքերի հետ միասին ներկայ էին Մեծ իշխան Միկայիլ Նիկոլայե լիլի մօտ պատրաստված ընտանեկան ճաշին Միկայ- լովնա: Այսօր կերթայ դերմանական կայսրը «Հօհենցօլէրն» նաւի վրա նախաձայնելուց յետոյ, ուր հրաւիրված են մօտ 70 անձինք: Ստաստ-է- կրէտար Գիւրիլի չնորված է «Ա Սթոու» բրի- լիանտէ չքանաւոր. մինիստրի օգնական Վլա- դալիւս—առաջին կարգի «Կարմիր Արծու» չը- քանաւոր, կոմս Հէրբէրտ Բիսմարկին Ալեքսանդր Նիկոլայ բրիլիանտէ չքանաւոր «Journal de St. Petersburg» լրագրը ասում է, «Գերմանական կայսրի Ռուսաստանում աւելի երկար մնալը ա- պացոյց է այն սրտագին յարաբերութիւնների, որ հաստատվել են Կայսրական ընտանիքի անդամ- ների և նրանց Օգոստոսիտու. հիւրի մէջ և ցան- կութիւն է յղացրել յետաձգել բաւանման րօպէն: Ամեն բանից երևում է այդ յարաբերութիւնների չափազանց սրտագինութիւնը, որ կարող է միայն բարեբեր կերպով ազդել երկու կառավարութիւն- ների փոխադարձ յարաբերութիւնների վրա»:

Կիւլի, 12 յուլիսի: Երէկ Սֆիւա անուանով հը- րապարակի վրա կայացաւ Բոլքարան խախնիցիւ աքձանի հանդիսաւոր բացումը: Արձանի բացմանը ներկայ էին երկրի կառավարչատեղը, քաղաքի ներկայացուցիչները, զորքերը, պատգամաւորները և հիւրերը, որոնք եկել են Ռուսաստանի դանա- զան ծայրերից և սլաւոնական երկրներից: Խախ- նիցիի գէտմանի հաղուստով նստած է ձիւ վրա. ձախ ձեռքով բռնած ունի ձին. իսկ աջ ձեռքում բռնած ունի դաւանի կոշման նշանները և մատ- նացոյց է անում հարաւորեւելքի վրա—Մոսկվա:

վրա. Ժայռի վրա, զբաղվողն անհատական
նի երկու կողմերից մեկի վրա փորագրված է.
«Միացեալ, անբաժան, Ռուսաստանը Բազմա-
խմբից կուս», իսկ միւսի վրա փորագրված է.
«1654—1888 թ.»։ Ռուսները միջոցառումն
900-ամեակը սկսվեցաւ. երեկ հակումով բարե-
պաշտ մեծ իշխանուհի Օլգայի դադալի մօտ իսկ
այսօր, բարեպաշտ իշխանուհի Օլգայի մահուան
օրը, Վենետիկայա եկեղեցում սերբիական միտ-
րօպօսիտը պատարագ մատուց. պատարագից յե-
տայ հոգեհանգիստ կատարվեցաւ. Ռուսաստանում
քրիստոնէութեան տարածման նպատակով կիւի-
քոյր իշխանները և իշխանուհիները համար, ո-
րոնք թաղված են կիւիքոյն ցաւեր յիշատակ մաղ-
թելով հանդուցեալ իշխանները և իշխանուհիները
համար, թաղիքը սկսեց գնալ Վենետիկայա եկե-
ղեցուց ու Օլգայի մաղթանքը երգելով «Երեք
քահանայապետները» եկեղեցին հասնելով գոհա-
բանական մաղթանք կատարվեցաւ. ուստաց երկի-
րը հեթանոսութիւնից ազատելու համար, Երեկո-
յեան, յուլիսի 11-ին, քաղաքային դռնապան կա-
յացաւ ժողովրդական ընթերցանութիւնների յանձ-
նաժողովի ընթերցանութիւնը ուսանելի միջոցա-
րեան մասին

ՓԱՐԻՉ, 12 յուլիսի Բուլանտէ անաշոյողութիւն
ուսանալով Արքեպիսկոպոսական եղած ըն-
տրութիւնների ժամանակ, ուր յաղթեցին օգոր-
տիւնիստները, հանդէս է գալիս որպէս կանգի-
դատ Սոմա զեպարտամենտում օգոստոսի 19-ին

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 յուլիսի Հրատարակված է
պօլիցիայի վերակազմութեան վճիռը բաղկեան
նախնայներում

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 յուլիսի «Journal de St.-Pe-
tersbourg» լրագիրը ասում է, որ իրաւունք չու-
նենալով քննադատել այս օրերս կայսերական
լնտանիքի անդամները և վիճելով կայսրի մէջ
հաստատված յարաբերութիւնների անձնական
կողմը, սակայն հնարաւոր է համարում պնդել,
որ եթէ բարեկամական քաղաքականութեան ա-
պացոյցը, որ վիճելով կայսրը պարտք համարեց
ներկայացնել մեր Թաւրաւոր կայսրին և մեր Թա-
ւուհի կայսրուհուն, իր առաջին այցելութիւնն
անելով Ռուսաց Արքեպիսկոպոս, ներշնչված էր իր
թագաւորութեան հինգ սկզբից բարեկամական
յարաբերութիւններ հաստատելու և երթալկան
խաղաղութիւնը պահպանելու ցանկութեամբ,
այն ժամանակ այդ նպատակը հասած է երկար
ժամանակով։ «Մենք չենք կասկածում, — աւելա-
ցնում է լրագիրը, — այն բանի մէջ, որ բոլոր ազ-
գերը կուրախանան, տեսնելով ընդհանուր խաղա-
ղութեան պահպանութեան համար այդ նոր և
զօրեղ զբաղանքը

Կ. ՊՈԼԻՍ, 13 յուլիսի Թիւրքիայի և Անգլիայի
յարաբերութիւնների մէջ էական տարբերութիւն
սկսվեցաւ. Եգիպտոսի պատճառով։ Բ. Կրան տրա-
մաղրութիւնը շատ խաղաղասիրական է։ Արձակ-
վում են պահապան զօրքի մէջ մտնելու համար
40,000 մարդիկ և այժմ զինուորագործեան հա-
մար կանչված 25,000 մարդիկ կանչված են մի-

այն զինուորական ծառայողները սովորելու հա-
մար

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ			
Յուլիսի 12-ին			
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	106	40	>
Համբուրգի վրա 100 մարկ	52	>	>
Փարիզի վրա 100 ֆրանկ	42	>	>
Ռուսի	8	>	50
Մաքսային կուպոններ	170	>	75
Արծաթ	1	>	33
Բորսային դիվիդենդներ	6%	71%	0%
Պետական 5% տոմս 1-ին շրջանի	98	>	87
— — — — — 2-րդ	98	>	75
— — — — — 3-րդ	98	>	25
— — — — — 4-րդ	98	>	50
— — — — — 5-րդ	98	>	37
— — — — — 6-րդ	—	>	—
Նոր 4% փոխառութիւն	82	>	37
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ.	99	>	25
— — — — — 2-րդ	98	>	87
— — — — — 3-րդ	98	>	50
Ներքին 5% առաջին փոխառութիւն	268	>	75
— — — — — երկրորդ	251	>	75
5 1/2% բէնտա	101	>	—
Ռուսիայի բէնտա	185	>	50
Եւրոպայի կոնսոլիդացի փոխառու- թիւն	160	>	—
Նոր երկաթուղային բէնտա	99	>	—
5% զբաղական թղթեր կալուած	—	>	—
— — — — — 1-ին	160	>	—
— — — — — 2-րդ	97	>	25
5 1/2% զբաղական թղթեր խորհուրդի կալուած բանկի	98	>	12
6% զբաղական թղթ. խորհուրդի կալ. բան.	101	>	—
— — — — — Պոլտավայի	101	>	—
— — — — — Պետ. հուկու	101	>	—
— — — — — Կիւիլի	101	>	25
— — — — — Մոսկովայի	100	>	87
— — — — — Բեսարաբ. Տաւր.	102	>	50
— — — — — Նիժ. Սամար.	101	>	—
— — — — — Վիլնայի	100	>	75
— — — — — Թիֆլիսի	27	>	43
— — — — — Գուբայի	18	>	43
Վլադիմիր-Կամսկի բանկի ակցիաները	—	>	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	—	>	—
Իրենիսկ-Բոլոգոյի ընկ.	80	>	75
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդի- նացիաներ	94	>	37
— — — — — Մոսկովայի քաղաք. օրդինացիաներ	93	>	75
Օդեսա	93	>	87
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օ.	—	>	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը հանդարտ է	—	>	—

ԻՄԲԱՎՈՐԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԹՕԹՐԱՔԱՆ (ԲՈՂԱՐԱՄ). Թ. Հ. Դուր արժմ
էք գրվում «Մշակի» ամբողջ տարով սկսած
ներկայ թիւ յունվարից։ Մենք կուղարկենք հա-
մարները, բայց յոյս ունենք, որ ներդրումը կը
լինէր, եթէ մի քանի համարներ պակաս կը լինեն,
որովհետեւ ուշ էք գրվել, իսկ մենք այնքան թեւով
ենք ստուգում, որքան բաժանորդ ունենք։

Իմքաղութիւն-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԵՆԻԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

1000 ՐՈՒՔԼԻ

ՈՒՋՈՒՄ ԵՄ ՏՈԿՈՍՈՎ

Հասցէն թողնել «Մշակի» խմբագրատանը։

1—4

ԲԻԼԻԱՐԴԻ ԳՆՏԵՐ

Մեծ ընտրութեամբ, կիւնք և նրանց համար կաշի ծախվում են ճախարակաւոր ժա-
պետ Վ. Գովիկովսկու մօտ, Օդեսայում, Կրասնի պերեուլ, տուն Շվարցի (Одесса,
красный переул. д. Шварца, токарн. мастеръ В. Говликовскій).

1—10 (2)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի, յուլիսի 21-ին, ՄԵՕՋ (MEUSE) շոգենաւը, նաւապետ ՍԵՐԵՆՆՈՆ
(SERENON) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պոլիս և Մարսել։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում Լէմբոյուի տան, Նաբեբէճեայա, և Թիֆլիսում Նախկին Ար-
ժուհի զալկերէում, № 103.

3—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 15/27 յուլիսի ԲԱՌՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ MENDOZA (ՄԵՆ-
ԴՕՋԱ) նաւապետ REGNIER (ՐԵՆԻԷ) մանելով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիւրա.
Ազնանները՝ ԲԱՌՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ Թիֆլիսում ԳԵՌԳ. ՀԵՋՈՒԹԵԱՆ
ՀԵՋՈՒԹԵԱՆՑ։

2—2

Н Ъ М Е Щ К А Я Г О С Т И Н И Ц А
ВЪ ВАРШАВѢ
31. Длугая улица 31.
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ
ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, Կուրապ փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյն
խիւ ԱՌՆԵՏԲԱՆԻ կենտրոնում, ԹԱՏՐՈՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՈՆԱՏԵՂԵՐԻ կողքին.
90 սենեակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կօպէկից մինչև 3 բուքի օ-
րական վարձով։

ԿՕՆԴԻՏԵՐԻԱ և ԲԷՍՏՕՐԱՆ
ձաշեր 30 կօպէկից մինչև 1 բուքի.
ՕՍՆԵՐՈՒՄՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար.
ԿԱՌՔԵՐԻ վարձը չափաւոր գներով։

(2)

ՀԱՋՈՒԵԿՋԻԹ				Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի			
				g1-ն (Յուլիսի 1888			
Պ Ա Հ Ա Ն Ջ Գ				Պ Ա Ր Տ Գ			
Թիֆլիսում	Բաղուի բաժն.	Ընդամենը		Թիֆլիսում	Բաղուի բաժն.	Ընդամենը	
1. Դրամարկը (առձեռն թղթադրամ).....	100,914—85	10,567—23	111,482—08	1. Հիմնական դրամադրույս.....	1,000,000 —	—	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	465—15	200,000 —	200,465—15	2. Պահեստի դրամադրույս.....	154,474—72	—	154,474—72
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստո- րագրութեամբ.....	2,547,890—14	792,597—88	3,340,488—02	3. Դրամական աւանդներ՝ ա) Պայմանաժամով.....	1,739,244 —	110,214 —	1,849,458 —
4. Զեղչումն մուրհակաց միակ ստորագրու- թեամբ, ապահոված սպանդանքներով.....	50,000 —	—	50,000 —	բ) Գահանջ.....	220,113 —	14,570 —	234,683 —
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	13,717 —	2,723—50	16,440—50	գ) Ընթացիկ հաշուով հասարակ.....	896,992—30	402,108—01	1,299,100—31
6. Փոխառութիւն դրամականով՝ ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի. բ) ոչ ապահ.	1,063,818—16 166,613 —	223,476 — 12,910 —	1,287,294—16 179,523 —	դ) Ընթացիկ հաշուով հասարակ.....	—	130,887—06	130,887—06
գ) ապահանքների	—	53,861 —	53,861 —	4. Զեղչումն մուրհակաց պետական բան- կայի թիֆլիսի բաժնում.....	74,655—81	—	74,655 81
դ) Ոսկու և արծաթի	—	23,840 —	23,840 —	5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետական բանկայի թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և տոկոսաբեր թղթերով.	304,000 —	—	304,000 —
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	315,097—44	20,162—38	335,259—82	6. Թղթակիցներ՝ ա) Նոցա հաշիւը (Loro).....	2,519,552—26	—	2,519,552—26
8. Ոսկի և արտասահմանի փոխանակադրեր.,	73,710—17	4,748—55	78,458—72	բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	4,667,964—10	—	4,667,964—10
9. Թղթակիցների՝ ա) Նոցա հաշիւը (Loro).....	2,632,210—46	—	2,632,210—46	կենտրոն. վարչութ. հաշիւը բաժնի հետ..	—	689,132—85	689,132—85
բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	4,238,962—26	—	4,238,962—26	8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրօն- ների բաշիւը 1882, 83, 84, 85, 86 և 87 թ.	79,423—03	—	79,423—03
10. Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութեան հետ. կենտրոն. վարչութեան հաշիւը բաժնի հետ.	681,929—45	—	681,929—45	9. Ձը վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողու- թեանց.....	6,044—58	—	6,044—58
11. Բողոքուած մուրհակներ.....	—	57,562—48	57,562—48	10. Ստացուած տոկոսներ և յանձնարարա- կաններ	57,811—48	10,395—86	68,207—34
12. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւն- ներ.	9,325 —	2,900 —	12,225 —	11. Փոխանցիկ գումարներ.....	126,421—66	51,632—95	178,054—61
13. Ընթացիկ ծախսեր	25,974—71	7,811—90	33,786—61	— — — — —	90,792—06	8,029—32	98,821—38
14. Կահկարասիք և սկզբնական ծախսեր.....	3,461—51	3,009—77	6,471—28				
15. Զեւ ստացուելիք ծախսեր.....	13,399—70	799—36	14,199—06				
Բ. Ա.	11,937,489 —	1,416,970—05	13,354,459—05	Բ. Ա.	11,937,489 —	1,416,970—05	13,354,459—05